

# ՍԱՏՐԱՊՈՒԹԻՒՆԵՐԻ ՀԵՐՈԴՈՏԵԱՆ ՑՈՒՑԱԿԸ (ՊԱՏՄԱԱՏԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՔՆՍՈՒԹԻՒՆ)

ՑՈՎԱԱՍԱԷՍ Գ. ԽՈՐԻԿԵԱՆ  
hovhkhor78@mail.ru

Դարեկ Ա. Վշտասպորդին (Ք.ա. 522-486), յաղթելով իշխանութեան համար մղուած պայքարում եւ վերականգնելով Պարսից Տէրութիւնը, այն բաժանում է 20 սատրապութիւնների<sup>1</sup>: Սատրապութիւնների ցանկը պահպանուել է Հերոդոտոսի աշխատութիւնում<sup>2</sup>, սակայն ըստ որոշ ուսումնասիրողների ցուցակը չի համապատասխանում պարսից արքաների արձանագրութիւններում յիշատակուող երկրների հերթականութեանը: Խնդիրն այն է, որ սեպազիր արձանագրութիւններում՝ ի դեմս թուարկուող երկրների, մասնագիտական գրականութեան մէջ փորձել են տեսնել Աքեմենեան Պարսկաստանի վարչական բաժանման արտացոլումը: Օրինակ, տարակարծութիւնների տեղիր կարող է տալ այն հարցը, թէ ինչու Պարթեաստանը, Արեան, Սոգդը և Խորեզմը ընդգրկուած են ԺԶ սատրապութեան մէջ, եթի արձանագրութիւններում այդ երկրները յիշատակուած են առանձին-առանձին: Այս եւ այլ անհամապատասխանութիւնները, բնականաբար, պատճառ կը հանդիսանան զգուշութեամբ եւ վերապահութեամբ ըննելու Հերոդոտոսի տեղեկութիւնները:

Ումանք, հերոդուտեան ցուցակն համարել են Հերոդոտոսին կամ նրա աղբիր Հեկատեոսին յայտնի Եթնիկական եւ աշխարհագրական անունների կամայական հաւաքածու:<sup>3</sup> Որոշ ուսումնասիրողներ եւ կարծում են, որ արձանագրութիւններում թուարկուող երկրները ներկայանում են որպէս պատմամշակութային ընդհանրութիւններ, որոնք միշտ չեն, որ պետք է համապատասխանէին վարչական բաժանումներին<sup>4</sup>, յատկապէս, եթէ նկատի ունենանք, որ Բեհիսթունի բարձրաքանդակներում ընդգծուած են խոռվարար, ինքնակոչ թագաւորների ազգագրական նկարագրի առանձնայատկութիւնները: Կարծիք է յայտնուել նաեւ, թէ Հերոդոտոսը նկարագրել է իր ապրած ժամանակաշրջանի պարսից պետութեան բաժանումը, որը համընկնում է Արտաքսերքսէս Ա.ի կառավարման ժամանակաշրջանին (Ք. ա. 465-424)<sup>5</sup>: Բազմաթիւ ուսումնասիրողների ենթադրութեամբ, Հերոդոտոսին աղբիր է ծառայել Հեկատեոսը, չնայած Հերոդոտոսը նոյնպէս կարող էր կատարել որոշ յաւելումներ, ընդ որում Հեկատեոսի կամ Հերոդոտոսի ցուցակի հիմքում ընկած է մի պարսկական պաշտօնական աղբիր<sup>6</sup>: Սակայն կայ նաեւ տեսակետ, թէ Հերոդոտոսը տուեալ հատուածը շարադրելիս ոչ մի պարսկական պաշտօնական աղբիր եւ չի ունեցել, այլ օգտուել է Հեկատեոսի երկից եւ քարտեզից, որտեղ ներկայացուած են Ասխան բնակեցրած տարբեր ժողովուրդներ<sup>7</sup>:

Իգոր Դիակոնովի կարծիքով, Տերոդրուսի ցուցակում սատրապութիւնները թուարկուած են նախ Մարական Տերութեանը, յետոյ Արեմէնեան Պետութեանը միացման հերթականութեամբ<sup>8</sup>: Իրանազիւ Էրևան Հերցֆեղը գտնում է, որ Հեկատեոսը ունեցել է մինչեւ Ք.ա. 514 թուականը կազմուած սատրապութիւնների ամբողջական ցուցակի ընդօրինակութիւնը, իսկ Հերոդուսի մօս ցուցակը ներկայացուած է աղճառուած, առանձին մշշերումների տեսքով, չնայած դրանք պարունակում են սատրապութիւնների պաշտօնական անուանումները եւ իհմը են տալիս պատկերացում կազմել Հեկատեոսի ցուցակի մասին<sup>9</sup>:

Այս տարակարծութիւնների պատճառն, անշուշտ, այն է, որ պարսկական պաշտօնական աղբիւրը մեզ չի հասել: Մեր կարծիքով, հարցի լուծման բանային առկայ է հետեւ Հերոդուսի երկում: Սակայն, ենելով ընտութեան շահեկանութիւնից, նախ ամբողջութեամբ մժօքերենք յոյն պատմիշի երկի այն հատուածը, որտեղ եկարագրում են Արեմէնեան Պարսկաստանի վարչական միաւորները՝ սատրապութիւնները: Այսպէս, Հերոդուսուր գրում է. «Հնիացիներից, Ասիայի մազնէսեաններից, եղուաններից, կարիացիներից, լիլիացիներից եւ միջիացիներից եւ պամփիլիացիներից, քանի որ երանց բոլորի համար սահմանուել էր մեկ ընդհանուր հարկ, ստացում էր չորսհարիւր տաղանդ արծաթ: Այս էլ Դարեկիր հաստատեց որպէս առաջին (այս եւ յաջորդ ընդգծումները մերն են - Յ.Խ.) եահանց: Միայնակ լիլիացիներից, լատոններից, կաբալներից եւ հիւտններից (ստացուում էր) հինգհարիւր տաղանդ. այս էլ երկրորդ եահանցն էր: Հեպի ներս նաւարկելիս աջակողմեան հելլեսպոնտոսիներից, փոխլիացիներից, Ասիայի թրակացիներից, պափլագոնացիներից, մարիանոններից եւ սիրիացիներից (ստացուող) հարկը երեքհարիւր վաթուն տաղանդ. այս եահանցը երրորդն էր: Կիլիկինները տալիս էին երեքհարիւր վաթուն սայիտակ ձի, տարուայ իրաքանչիւր օրուայ համար մեկ ձի, եւ հինգհարիւր արծաթ տաղանդ, որից հարիւրքառասուեր ծախսում էր կիլիկեան երկիրը պահպանող հեծելագորի վրայ, իսկ երեքհարիւր վաթունը հասնում էր Դարեկին: Սա չորրորդ եահանցն էր: Պոսիդոն քաղաքից, որը հիմնել է Ամֆիարասուի որդի Ամֆիլոքոսը Կիլիկիայի եւ Սիրիայի սահմանին, մինչեւ Եզիպոտոս ընկած երկիրը, բացի արաբների երկիրից, որն ապահարկ էր, ստացուում էր երեքհարիւր յիսուն տաղանդ հարկ: Այս եահանցի մեջ էին ամբողջ Փինիկիան եւ Պաղեստիննեան կողուած Սիրիան ու Կիպրոսը: Սա հինգերորդ եահանցն էր: Եզիպոտոսից եւ Լիբիայի, Կիրենէի ու Բարկայի՝ Եզիպոտոսին յարած մասերից, որոնք ընդգրկուած էին Եզիպ-տական եահանցի կազմում, ստացուում էր եօթհարիւր տաղանդ, չհաշուած Մոյրիս լճի ձկնորսութիւնից ստացուող արծաթը: Ահա այդ արծաթից եւ իբրեւ հարկ վերցուող ցորենից բացի [այդ երկիրից] ստացուում էր

հօթեարիւր տաղանդ: Քանզի Մեմփիսի սպիտակ բերդում հաստատուած պարսիկների եւ նրանց վարձկանների համար վերցուում էր տասներկու բիւր մեղիսնասու<sup>10</sup> ցորեն: Սա վեցերորդ նահանգն էր: Սատուագիտները, զանդարիները, դատիկները եւ ապարիտները համատեղ վճարում էին [տարձկան] հարիւրեօթանատուն տաղանդ հարկ: Սա եօթերորդ նահանգն էր: Սուսայից եւ կիսսիցիների երկրի մնացած մասից վերցուում էր երեքհարիւր տաղանդ: Սա ութերորդ նահանգն էր: Բարելոնից եւ մնացեալ Ասորեստանից ստացուում էին հազար տաղանդ եւ հինգիարիւր ներքինիացուած տղաներ. սա իններորդ նահանգն էր: Ազրատանան, Մեղիայի մնացեալ մասը, պարիկանիները եւ օրոռկորիւրանտիները վճարում էին չորսհարիւր յիսուն տաղանդ. սա տասներորդ նահանգն էր: Կապակըրը, պատուիկները, պանտիմաթները եւ դարձյուները, մէկ նահանգ կազմած, վճարում էին երկուհարիւր տաղանդ: Սա էլ տասեսնեկերորդ նահանգն էր: Բակտրիացիներից մինչեւ Այզերի [երկիրը քնակուողները] վճարում էին երեքհարիւր տաղանդ հարկ. սա էլ տասներկուերորդ նահանգն էր: Պակտիսիկէից, արմէններից եւ հարեւաններից մինչեւ Եռտիխնեանը ստացուում էր չորսհարիւր տաղանդ. սա տասներեքերորդ նահանգն էր: Սազարտիները, սարանցները, քամաները, ուտիները, միւկերը եւ Կարմիր Ծովում գտնուող կղզիների քնակիչները, որտեղ արքան քնակեցնուում է, այսպէս կոչուած, տեղահանուածներին, այս բոլորը վճարում էին վեցհարիւր տաղանդ հարկ. սա տասնշորսերորդ նահանգն էր: Սակէրը եւ կասպէրը վճարում էին երկուհարիւր տաղանդ. սա տասնեինգերորդ նահանգն էր: Պարթևները, բորասմները, սոզդերը եւ արկները վճարում էին երեքհարիւր տաղանդ. սա տասնվեցերորդ նահանգն էր: Պարիկանիները եւ Սախայի եթովպաշցիները վճարում էին չորսհարիւր տաղանդ. սա տասնեօթերորդ նահանգն էր: Մատիէնների, սասպէյների եւ ալարողների վրայ սահմանուած էր երկուհարիւր տաղանդ հարկ. սա տասնութերորդ նահանգն էր: Սոսքերի, տիգարէնների, մալորնների, մոսսինոյկների եւ մարերի վրայ սահմանուեց երեքհարիւր տաղանդ [հարկ]. սա տասնիններորդ նահանգն էր: Իսկ հնդիկները, լինելով մեզ յայտնի ազգերի մէջ բոլորից առաւել մէծաթիւ, պարտաւոր էին, միւսների հետ համեմատած, բոլորից առաւել հարկ վճարել՝ երեքհարիւր վարտուն տաղանդ ուկէ աւագ. սա քանաներորդ նահանգն էր»<sup>11</sup>:

Այսպիսով, Հերոդոտոսի ցուցակում, 20 սատրապութիւնների կազմում յիշատակուում են Պարսից տէրութեան մէջ մտնող շուրջ 70 էննուներ եւ երկրներ, այն դէպքում, երբ Բնիհարունի արձանագրութիւնում բռարկուած են 23 երկրներ: Այդ երկրներն են Պարսք, Էլամը, Բարելոնիան, Ասորեստանը, Արաբիան, Եգիպտոսը, այն երկրները, որոնք ծովի մօտ են, Սարդիսը, Հոնիան, Մելիան, Արմինան, Կապադովկիան,

Պարթեւաստանը, Դրանզիանան, Արեան, Խորեգմը, Բակտրիան, Սոգդիանան, Գանդարան, Ակհիթիան, Սատրագիտիան, Արախոսիան, Մական<sup>12</sup>: Այս երկրները աշխարհագրոքն լրի կամ մասամբ համապատասխանում են հերոդոտեան ցուցակի հետեւեալ սատրապութիւններին. Հոնիան համապատասխանում է Ա., Սարդիսը՝ Բ. սատրապութեանը, Գ. սատրապութեան էթնոսների շարրում սիրիացիների յիշատակումը թոյլ է տախս Կապաղովկիան համապատասխան համարել այս սատրապութեանը. Ասուրեւստանը՝ Ե., Եզիզոսուրը՝ Զ., Սատրապիան, Գանդարան՝ Է., Էլամը՝ Ը., Բարելոնիան՝ Թ., Սեղիան՝ Ժ., Բակտրիան՝ ԺԲ., Արմինան՝ ԺԳ., Դրանզիանան՝ ԺԴ., Ակհիթիան՝ ԺԵ., Պարթեւաստանը, Խորեգմը, Սոգդիանան, Արեան ամրողովին՝ ԺԶ., Մական՝ ԺԵ.: Պարսք որպէս ապահորկ երկիր Հերոդոտոսը չի նշում սատրապութիւնների թում<sup>13</sup>: Խոկ «tyai drayahā»՝ «այն երկրները, որոնք ծովի մօս են» արտայայտութիւնը, մեր կարծիքով, աշխարհագ-րորէն կարող է համապատասխանել Փոքր Ասիայի հարաւարեւեան: Ափամերձ անկիննին, աւելի սոտյզ Կիլիկիային՝ Դ. սատրապութեանը, եւ, հնարաւոր է, նաև Կիլիպոսին:

Մի առիթով մենք հիմնաւորել ենք կասպ-վրկան նոյնացման տեսակետը<sup>14</sup>, եւ ելեկով Բեհիսթոնի արձանագրութեան այն յիշատակումից, թէ Պարթեւաստանում եւ Վրկանում ապստամբութիւնը ճնշելուց յետոյ Դարեկը յայտարարում է, որ այդ է իր կատարածը Պարթեւաստանում<sup>15</sup>, նշանակում է, որ Վրկանը մտել է Պարթեւաստանի կազմի մեջ: Արանից կարելի է եղրակացնել, որ Պարթեւաստանը համապատասխանում է նաև ԺԱ. սատրապութեան տարածքին (Ձնայած, որ Դարեկի վարչական վերակառուցումներից յետոյ այդ նոյնացումն արդէն բացառում է): Նոյն տրամարանութեամբ Արախոսիան պէտք է հանդես գար ինչ-որ երկրի անուան տակ և այդ երկիրը Սատրապիան է: Դարեկը Սաթագուշը յայտարարում է ապստամբ երկրների թում<sup>16</sup>, սակայն Սաթագուշի մասին այլ տեղեկութիւններ չի հաղորդում եւ, ընդհակառակը, խօսում է Արախոսիայում տեղի ունեցած ապստամբական գործողութիւնների մասին, որտեղ Վահեազդատան բանակ էր ուղարկել Արախոսիայի սատրապ Վիուանայի դեմ կրուելու համար<sup>17</sup>: Ճիշտ է, Դարեկը Արախոսիայում ապստամբութիւնը ճնշելուց յետոյ յայտարարում է, որ այդ է իր կատարածը Արախոսիայում (այսինքն՝ կարելի էր սպասել Սաթագուշում, ինչպէս Պարթեւաստանի դէպում), սակայն կարելի է ենթադրել, որ Արախոսիան եւս աշխարհագրոքն համապատասխանում է Ե. սատրապութեանը, ինչպէս Սատրապիան, Գանդարան, եւ, ըստ եւրեան, Դարեկը Արախոսիան թողեց այս սատրապութեան կազմում: Համեմատութեան համար նշենք, որ Բակտրիան էլ չի յիշատակում Դարեկի դեմ ապստամբած երկրների շարբում, բայց Մարգիանայում ապստամբու-

թիւնը ձնշելոց յետոյ Դարեկի յայտարարում է, որ այդ է իր կատարածք Բակտրիայում<sup>18</sup>: Միաժամանակ, հարկ է նշել, որ Բակտրիայի կազմում հանդե եկող Սարգիսան նոյնպես չի յիշատակում Հերոդոտոսի կողմից: Մական նոյնացրեցինք ժեկա սատրապութեանը, բայց բացառուած չէ, որ Սական համապատասխանէր նաև ժո՞ սատրապութեան միւկերին:

Մեր ընտութեան համար կարեւոր են նաև Հերոդոտոսի հետեւեալ տեղեկութիւնները: Պատմիշը, նշելով հարկատու ցեղերին ու ժողովուրդներին, գրում է, որ «ահա այս հարկերն էին զայիս Դարեկին Ասիայից եւ Լիրիայի մի փոքր հասուածից: Ժամանակ անց հարկ է ստացւում նաև կղզիներից ու Եւրոպայում մինչեւ Թեսալիա (ընդգծումը մերն է - Յ.ն.) ապրողներից»<sup>19</sup>: Այս վերջին տեղեկութեան մեջ «Ժամանակ անց» ցոյց է տալիս, որ մինչ յունական կղզիների, Թրակիայի ու Սակեղոնիայի նուաճումը, Դարեկ Ա.ի վարչական վերափոխումներն արդէն կատարուած իրողութիւն էին, եւ այդ իրողութիւնն արտացոլուած էր Հերոդոտոսի մօտ պահպանուած սատրապութիւնների ցուցակում: Յունական կղզիները՝ Սամոսը, Էենոսը, Քիոսը, նուաճուել են մօտ Ք.ա. 517ին, եւ մօսաւորապէս Ք.ա. 517ին նուաճուել է նաև Հնդկաստանի հիւսիսարեւմտեան մասը<sup>20</sup>:

Ս. Ա. Դանդամանը Դարեկի վարչա-դրամականը<sup>21</sup>: Բնեիսթումի արձանագրութիւնն աւարտուել է Ք.ա. 518ին<sup>22</sup>, որտեղ Հնդկաստանը, Սակեղոնիան, Թրակիան յիշատակուած չեն: Հնդկաստանը յիշատակուում է Դարեկ Ա.ի Ներսեպոյիսեան Շ: կոչուած արձանագրութիւնում<sup>23</sup>, իսկ Դարեկ Ա.ի Նաոշէ Ռոստամի Ա կոչուած արձանագրութիւնում արդէն Հնդկաստանը և Սակեղոնիան ու Թրակիան ընդգրկող Ակուդրա սատրապութիւնը յիշատակուում են միասին<sup>24</sup>: Սա նշանակում է, որ Դարեկի կողմից Հնդկաստանի նուաճումը աւելի փառ է տեղի ունեցել, Եգեական ծովի նշուած կղզիների հետ միաժամանակ, քանի որ վերջիններս ներկայանում են «Ionians who are of the mainland»<sup>25</sup> արտայայսութեան տակ: Մեր կարծիքով, Նաոշէ Ռոստամի արձանագրութիւնը արտացոլում է Դարեկին հպատակ երկրների ամրողական պատկերը, եւ թերեւս այս պատկերը հիւսիսերձսեւծովեան սկիթների դեմ Դարեկի կատարած արշաւանքին<sup>26</sup> յաջորդած պատմական իրողութիւնն էր: Իսկ սա արդէն նշանակում է, որ ոչ Բնեիսթունի, ոչ Նաոշէ Ռոստամի եւ ոչ էլ ընդհանրապէս միս իին պարսկական արձանագրութիւնները չեն արտացոլում Արեւմէնեան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգը: Եթէ Հնդկաստանը նուաճուել է Ք.ա. 517ի մօտերքը, այսինքն՝ Բնեիսթունի արձանագրութիւնը գրուելոց յետոյ, եւ արդէն իսկ որպէս առանձին սատրապութիւն առկայ է սատրապութիւնների հերոդուտեան ցուցակում, նշանակում է, որ Դարեկի վարչական վերափոխումներն իրագործուել են մինչեւ հիւսիսերձսեւծովեան սկիթների դեմ կատար-

ուած արշաւաերը, քանի որ հենց Հերոդոտոսը, թուարկելով սատրապութիւնները, վերջում աւելացնում է, որ ժամանակ անց հարկեր են ստացում նաև կղզիներից և Եւրոպայի մի մասից:

Ք.ա. մօս 512ին Մակեդոնիան և Թրակիան կազմում են մեկ սատրապութիւն՝ Սկուդրա անուանումով<sup>27</sup>, այն դեպքում, երբ համագետական ընոյիքի վարչական վերափոխումներն արդեն կատարուել էին: Աւելի ուշ նոյնպէս տեղի էին ունենում վարչական փոփոխութիւններ պէտութեան ներսում: Այսպէս, օրինակ, Դարեհ Ա.ի ժամանակ Փոքր Ասիան բաժանուած էր 4, իսկ Դարեհ Գ.ի օրօք՝ 7 սատրապութիւնների: Դարեհ Ա.ի մահից շատ շանցած Վրկանն անջատուում է Պարթեաստանից և վերածուու առանձին սատրապութեան: Ք.ա. մօս 508ին Գանդարան՝ որպէս առանձին սատրապութիւն, անջատուում է Բակտրիայից: Եղել է նաև հակադարձ երեւոյթը. Ք.ա. Դ. դարում Էրիքսարին և Կիլիկիան միաւորուում են մեկ սատրապութեան մէջ<sup>28</sup>: Հաւանաբար, նոր սատրապութիւնների առաջացումը եւ հեների վերաձեռումը չէր ուղեկցուում նոր և համապատասխան համակայսերական հրամանագրերով (կամ էլ այդ հրամանագրերը մեզ չեն հասել) եւ ուներ տեղական նշանակութիւն: Այդ իսկ պատճառով հերոդոտեան ցուցակի հիմքում ընկած վարչական վերակազմնութեան վերաբերեալ պաշտօնական աղբիւրը Արեմէնեան արքունիքի կողմից չի ենթարկուել լրացումների եւ փոփոխութիւնների, այսինքն՝ Դարեհից յետոյ հանդէս եկող զահականները չեն ձեռնարկել համապետական մակարդակի վարչական վերափոխումներ: Մակայն, պէտք է ուշադրութիւն դարձնել մի հանգամանքի վրայ, որտեղ, ըստ Եւրեան, կրկին արտացոլուած է Արեմէնեան Պարսկաստանի սատրապական բաժանման պատկերը: Վերջինս, կարծում ենք, իր արտացոլումն է զույլ Քսերսէսի Հելլադա արշաւող բանակի նկարագրութեան մէջ, որի հիմքում, դատելով Հերոդոտոսի տեղեկութիւնից, ընկած է պարսկական պաշտօնական աղբիւրը, քանի որ ինչպէս հաղորդում է պատմիչը, Քսերսէսի հրամանով եւ ուղղակի ներկայութեամբ, գրագիրները գրի են առնում արշաւանքին մասնակցող բոլոր ազգութիւնների անունները, որոնք տրամադրել էին ցամաքային եւ ծովային ուղամական ուժերը<sup>29</sup>: Ստորեւ՝ արշաւանքին մասնակցող այն բոլոր ժողովուրդները<sup>30</sup>, որոնք յիշատակուած են նաև սատրապական ցուցակում եւ տեսնենք այն փոփոխութիւնները, որոնք կը յայտնաբերուեն քննութեան ընթացքում:

Այսպէս, Հերոդոտոսը արեւմտեան ժողովուրդներից նախ յիշատակում է պաֆիլագնացիներին, որոնց նմանութեամբ զիստած էին լիզիացիները, մատիկները, մարիանդիները, սիրիացիները: Այսուհետեւ ուզմական առումով փոխագիտացիներն ու արմէնները հանդէս են զայխ մէկ հրամանատարութեան ներքոյ: Լիդիացիներն ու միսիացիները յիշատակում են Արտափենեսի հրամանատարութեան տակ: Ասխայի

բրակացիներին առաջնորդում էր Արտաքանոսի որդի Բասսակէսը: Յետոյ նշում են պիտիացիները: Կարավաներին եւ միլիացիներին առաջնորդում էր Բաղրէսը, մոսքերին, տիբարեններին՝ Արիոնարդոսը, մակրոններին եւ մոսսինոյկներին՝ Արտայուկուսը: Հետեւակ զօրքի մէջ յիշատակում են մարերը, կողիւրը, ալարողները, սասպէրները, Կարմիր Ծովի կղզիաբնակները: Դատելով բանակի նկարագրութիւնից՝ իրարանչիր ցեղ յիշատակուած է տէրութեան մէջ ունեցած ըստ իր նշանակութեան: Ըստ այդմ էլ, նախ յիշատակուած են պարսիկները, այնուհետև մեղացիները, կիսսիացիները, հիլրկանները, ասորեստանցիները, խալբանները: Յաջորդաբար զայիս են բակտրիացիները, սակէրը, հնդիկները, արիները, պարթենները, քրասամները, սոգերը, զանդարները, դաղիկները, կասպէրը, սարանգները, պակտիւացիները, ուտիները, միւկէրը, պարիկանները, արաքները եւ Եզիպտոսից վերեւ բնակուող եթովպացիները, հնդիկներին միացուած արեւելեան եթովպացիները, լիբիացիները: Բանակի հեծելագօրը կազմուած էր պարսիկներից, պարսիկների կողքին կանգնած սազարտիներից, մեղացիներից, կիսսիացիներից, հնդիկներից, բակտրիացիներից, կասպէրից, լիբիացիներից, պարեկանիներից, ուղտեր նստած արաքներից: Նաւատորմը կազմուած էր փինիկեցիներից, Պաղեստինի սիրիացիներից, Եզիպտոսիցիներից, կիպրոսցիներից, կիլիկեցիներից, պամիկիւլիացիներից, լիկիացիներից, Ասխայի դորիացիներից, կարիացիներից, հոնիացիներից, [Եզեւական Ծովի] կղզիաբնակներից, Եուլիացիներից, հելլեսպոնտոցիներից: Ըստ Հերցիլի՝ Հերոնոտոսի տեղեկութիւնները Քսերքսէսի բանակի մասին հիմնուած են մի աղբիւրի վրայ, որտեղ համատեղուել են մի կողմից ժողովուրդների անունները, ջոկատների թուաքանակը եւ հրամանատարների անունները պարունակող պարսկական ցուցակը, միւս կողմից՝ ականատեսների վկայութիւնները, որոնք տալիս են հազուսոի եւ սպառազինութեան նկարագրութիւնը: Քսերքսէսի բանակի մասին տեղեկութիւնները համեմատելով հարկատու շրջանների ցուցակի եւ պարսից արքաների արձանագրութիւնների հետ, որոնք վերաբերում են միջինասիական ժողովուրդներին, տեսնում ենք, որ օօրքերի թուարկման մէջ կան որոշ տարբերութիւններ: Այսպէս, Վրկանները, որոնք չեն յիշատակում սատրապութիւնների ցուցակում, առանձնացուած են որպէս առանձին ջոկատ, բակտրիացիները միացուել են սակէրին, չեն յիշատակում որոշ ցեղեր: Այս անհամապատասխանութիւնները կարելի է բացատրել այն փոփոխութիւններով, որոնք տեղի էին ունեցել Ք.ա. շուրջ 480ին (օրինակ, ցեղերի անջատուելը, սատրապութիւնների վերակազմումը եւն):<sup>31:</sup>

Անշուշտ, Քսերքսէսի բանակի մասին տեղեկութիւնները հիմնուած են պարսկական պաշտօնական աղբիւրի վրայ, սակայն, ի տարբերու-

թիւն սատրապութիւնների նկարագրութեան, բանակի մասին տեղեկութիւններում Հերոդոտոսը դրսւորում է որոշ կամայական մօտեցումներ, այսպէս ասած, որոշ հաղորդումներում կատարելով յաելումներ և ճշգրտումներ՝ ի ցոյց դնելով իր բանիմացութիւնը: Օքինակ, ըստ պատմահօր, փոխիգիացիններն ու արմէնները հանդէս են զայս մէկ հրամանատարութեան ներքոյ, ընդ որում, ինչը յաճախ է հանդիպում Հերոդոտոսի մօտ, վերջինս պատմական ակնարկի տեսքով ներկայացնում է փոխիգիացինների, այսպէս ասած, նախապատմութիւնը եւ շատ արագ անցում կատարում արմէններին՝ նշելով, որ Վերջիններու փոխիգիական վերաբնակիչներ էին եւ զինուած փոխիգիերի նման<sup>32</sup>: Հեղինակի այս տեղեկութեանը մի առիթով մենք արդին անդրադարձել ենք եւ նշել, որ Կեսար-իա-Մաժակի շրջանում հաստատուած մուշքերին, որոնք երկար ժամանակ գտնուել են Հայաստանի քաղաքական տիրապետութեան ծայր արեւմուտրում, եւ որոնց, ըստ պատմահայր Խորենացու, Արամ Նահապետը ստիպել էր սովորել հայերէն եւ դարձրել իր ժողովուրդը, յունական աշխարհը, իրօք, կարող էր համարել փոխիգիական վերաբնակիչներ, որոնց հետ էին նախ եւ առաջ շփուել յոյնները: Հետեւարար, Հերոդոտոսի արմէնները հենց այս մուշքերն են, եւ խօսքը սոսկ պատմական յիշողութեան մասին է<sup>33</sup>:

Քսերքսէսի բանակի նկարագրութեան մէջ կայ մի հետաքրքիր իրութիւն, ինչը թոյլ է տախոս կատարել որոշ հետեւութիւններ: Այսպէս, այն բոլոր ժողովուրդները, որոնք Հերոդոտոսի կողմից նշուած են իրեւ Արեւմէնեան Պարսկաստանի վարչական համակարգից դուրս գտնուող այսպէս կոշուած ապահով երկրներ կամ ցեղեր, Քսերքսէսի բանակում յիշատակուում են իրենց զօրամասերով: Այդ ժողովուրդներն են պարսիկները, երովապացինները, արաբները, կոլխները: Մեզ համար այս հարցում կարեւորն այն է, որ ծայրամասային ցեղերի՝ երովապացիններ, արաբներ, կոլխներ, յիշատակուով ցոյց է տրում Արեւմէնեան Պարսկաստանի սահմանները Քսերքսէսի կառավարման ժամանակում:

Քսերքսէսի բանակի նկարագրութիւնը կարելի է համեմատել նայն թագաւորի «Persepolis h» արձանագրութեան հետ, որտեղ թուարկուում են հետեւեալ երկրները. «Māda : Ūja : Harauvatiš : Armina : Zraka : Parθava : Haraiva : Bāxtriš : Sugda : Uvārazmiš : Bābiruš : Aθurā : Θαταγούš : Sparda : Mudrāya : Yaunā : tyā : drayahiyā : dārayatiy : utā : tyaiy : paradraya : dārayatiy : Maciyā : Arabāya : Gadāra : Hiduš : Katpatuka : Dahā : Sakā : haumavargā : Sakā : tigraxaudā : Skudrā : Ākaufaciyā : Putāyā : Karkā : Kūšiya»<sup>34</sup>. Այս արձանագրութեան համեմատութիւնը *DNa*ի հետ, որտեղ Արեւմէնեան Պարսկաստանի տարածքն առաւել ամբողջական է արտացոլուած, բացայսուում է աշխարհագրական երկու նոր անուանումների ի յայտ զալը՝ Ākaufaciyā (man of Akaufaka) եւ Dahā: Ākaufaciyā բայի մէջ ան մեր կարծիքով Ժխտական նախածանց է, իսկ kaufa- նշանակում է «լեռ, սար» + -

յա- ցեղանուանակերտ վերջածան<sup>35</sup>: Թրակիայի և Լիբիայի միջև յիշաստակուող Ակասիացի տեղադրել յստակ մի վայրում դժուար կը լինի: Փորձ է արուել տեղադրել այս ԺԷ. սատրապութեան կազմում՝ Արեմենեան Պարսկաստանի հարաւ-արեւելքում<sup>36</sup>: Մենք առաջարկում ենք այլ տեղադրութիւն, որը բխում է Հերոդոտոսի տեղեկութիւնների տրամաբանութիւնից: Սատրապութիւնների ցուցակում յիշատակուող մատիէնները, սասպէրները, պարողները հանդէս են զայս ԺԸ. սատրապութեան կազմում, իսկ Քսերքսէսի բանակի նկարագրութեան մէջ ալարողները եւ սասպէրները միաւորուած են մէկ հրամանաւորութեան ներքոյ: Թերեւս ԺԸ. սատրապութիւնը, որն ըստ վերջին ուսումնասիրութիւնների գտնուել է Կուրից հիւսիս միջև Կովկասեան մէծ լեռնաշղթան, արեւուտրում սահման ունենալով Սուրամի լեռները<sup>37</sup>, համապատասխանում է Քսերքսէսի Պերսեպոլիսեան Հ. կոչուած արձանագրութեան Ակասիացին, որը, մեր կարծիքով, նշանակում է «ոչ-լեռնցի», այսինքն՝ դաշտային, հարթավայրային երկրի բնակչի, իսկ աւելի ուշ ժամանակաշրջանում յայտնի Աղուանք-Արամիան լիովին կարող էր յաւակնել նմանօրինակ բնորոշմանը: Եթէ Ակասիացի նշանակում է միայն «լեռնցի», ապա նոյնին այդ դեպքում մեր տեղադրութեան սահմանները գրեթէ չեն խաթարուի, քանի որ եթիկական այդպիսի բնութագրման պարագայում կ'ընդլայնուեն մեր առաջարկած տեղադրութեան աշխարհագրական սահմանները, եւ Ակասիացի անուան տակ կը ներկայացնենք Կովկասեան մէծ լեռնաշղթայի ողջ տարածաշրջանում՝ ներառեալ ԺԹ. սատրապութիւնում (աւելի սույոջ արեւելեան հատուածում) ապ-ռող ցեղերին, իսկ Կովկասը, ըստ Հերոդոտոսի, Արեմենեան Պետութեան հիւսիսային սահմանն էր<sup>38</sup>: Եւ տրամաբանական է, որ Կովկասի այս կամ այլ կերպ արտացըլումը արձանագրութիւնում ամբողջութեամբ համապատասխանում է Արեմենեան Պարսկաստանի վարչական համակարգին վերաբերող միւս աղբիւնների տեղեկութիւնների համադրմանը: Ինչ Վերաբերում է Դահէն, ապա սա անտիկ աղբիւններում յայտնի դահերն են (Ճառ, Ճառ, Dahaε)<sup>39</sup>: Ըսդունուած է դահերին համարել սկիւրական ժողովուրդներից մէկը, սակայն չի բացառում, որ դահերը հենց Հերոդոտոսի յիշատակած պարսկական դայէր ցեղն է, որը հեղինակի կողմից բնորոշում է որպէս վաշկառուն ցեղ<sup>40</sup>: Բնականարար, այս պարագայում դահերը կարող էին յայտնուել Կասպից Ծովի հարաւարեւելեան ափերին, եւ թերեւս դահերի նախական բնակութեան շրջանից հեռու աշխարհագրական այլ միջավայրում հենց յայտնուելն էլ նրանց յիշատակելու պատճան էր: Քսերքսէսից յետոյ Արեմենեան արքաներին ենթակայ երկրները կամ ժողովուրդները յիշատակում են միայն Արտաքսերքսէս Բ.ի կամ Գ.ի Պերսեպոլիսի արձանագրութիւնում, որը մէջբերում ենք ամբողջութեամբ. «1 iayam : Pārsa : 2 iayam : Māda : 3 iayam

: Üvja : 4 iyam : Parθava : 8 iyam : Uvārazmīya : 9 iyam : Zrakā : 10 iyam :  
 Harauvatiya : 11 iyam : Ḍataguiya : 12 iyam : Gadāraya : 13 iyam : Hiduya: 14  
 iyam : Sakā : haumavargā : 15 iyam : Sakā : tigraxaudā : 16 iyam : Bābiruš : 17  
 iyam : Aθuriya : 18 iyam : Arabāya : 19 iyam : Mudrāya : 20 iyam : Arminiya : 21  
 iyam : Katpatuka : 22 iyam : Spardiya : 23 iyam : Yaunā : 24 iyam : Sakā :  
 paradraiya : 25 iyam : Skudra : 26 iyam : Yauna : takabarā : 27 iyam : Rutāya :  
 28 iyam : Kūṣāya : 29 iyam : Maciya : 30 iyam : Karka : »<sup>41</sup>: Այստեղ բուար-  
 կուած երկրները հանդէս են զայիս հետևեալ սատրապութիւնների  
 կազմում. Մեղացիները՝ ♂., կամացիները՝ ♂., պարթևները, բրաս-  
 ները, արեները, սոզերը՝ ♂Զ., բակտրիացիները՝ ♂Բ., սարանգները՝  
 ♂Դ., միւկերը՝ կա մ ԺԵ., կա մ ԺԷ., սատրապիւնները, զանդարիները՝ Է.,  
 հնդիկները՝ Ի., Աթօրան՝ Ե., բարելուացիները՝ ♂Թ., եգիպտացիները,  
 լիբիացիները՝ Զ., հայերը՝ ♂Գ., կապառվկիացիները՝ Գ., սարդեսի-  
 ները՝ Բ., հռիփացիները՝ Ա.: Ներողուտեան ցուցակի 20 սատրապութիւն-  
 ներից 13ի առկայութիւնն այս արձանագրութիւնում ակնյայտ է, իսկ  
 մնացածների մասին մեր քննութիւնը հետևեալն է: Արտաքսերքսէն Բ.ի  
 կամ Գ.ի Պերսեպոլիսեան արձանագրութիւնն ամբողջութեամբ համա-  
 պատասխանում է Դարեհ Ա.ի Նարշէ Ռուստամի Ա. կոչուած արձանագ-  
 ուութեանը: Այս երկրների ու ցեղերի յիշատակութեան հերթականութեան  
 նշյին տարբերութեամբ կրկնում է Դարեհ Ա.ի Սուզայի Ե. կոչուած  
 արձանագրութիւնը: Անկախ այս հանգամանքից, թէ Արտաքսերքսէն Բ.ի  
 կամ Գ.ի Պերսեպոլիսեան արձանագրութիւնն ու մ է պատկանել՝  
 Արտաքսերքսէն Բ.ի ն (Ք.ա. 404-358) թէ՝ Գ.ին (Ք.ա. 358-338), միա-  
 նշանակ է, որ նշուած երկու տիրակալների ժամանակ էլ Արտեմենեան  
 Դարսկաստանը յայտնուել էր ներքին եւ արտաքին ծանր կացութեան մէջ,  
 եւ երանց եռանդուն շանքերի շնորհի պետութիւնը վերականգնում է իր  
 նախկին հզօրութիւնը<sup>42</sup>: Նշուած երկու արձանագրութիւնների  
 աշխարհագրական եւ քանակական համապատասխանութիւնը բացա-  
 տրում է նրանով, որ եւ Արտաքսերքսէն Բ.ն, եւ Արտաքսերքսէն Գ.ն  
 ակնյայսօրէն «իրաւունք» ունեին իրենց գործունեութիւնը համեմատել  
 նախնի մեծն Դարեհ Ա.ի հզօրութեան հետ, քանի որ նրանց օրօք (այդ  
 «իրաւունքը» իրաւացիօրէն իրաքանչյուրին էլ կարող է վերաբերել)  
 Արեմենեան Դարսկաստանը շարունակում էր մնալ նախկին սահման-  
 ներուում:

Այժմ անցնենք մնացած երկրների տեղադրութեան հարցի քննու-  
 թեանը եւ տեսնենք, թէ տուեալ երկրները ու թ սատրապութիւնների կազ-  
 մում կարող էին հանդէս զայ: Ի սկզբանէ պարզ է, որ մի քանի երկրներ  
 կամ ժողովուրդներ, ինչպէս օրինակ ԺԶ. սատրապութեան պարագա-  
 յում, կարող էին ընդգրկուել մեկ սատրապութեան մէջ: Arabāyaի հար-ցում  
 անհրաժեշտ են պատմաշխարհագրական եական ճշգրտումներ: Արաքսների երկիրը սատրապութիւնների ցուցակում յիշատակում է որ-

պէս ապահարկ, այն դեպքում, եթի դատելով Հերողոսոսի տեղեկութիւններից՝ արաբները եւ միւս, այսպէս կոչուած, ապահարկ երկրները մտել են պէտութեան մէջ՝ ունենալով որոշակի պարտաւորութիւններ, ինչպէս մասցած ժողովուրդները։ Պատմիչը խիստ որոշակի նշում է, որ արաբները, կոլխերը, երովացիները ընծաներ ուղարկում են հարկերից բացի<sup>43</sup>։ Քսերքսէսի բանակի նկարագրութիւնից յսուակ երեւում է, որ հազի թէ Վերոյիշեալ ապահարկ ժողովուրդների մասնակցութիւնը յունական արշաւանքին բարի կամքի դրսեւորում լինէր։ Արաբիայի հարցում անտիկ աղբիւրների որոշ տեղեկութիւնների համարդումը բացայսում է մի կարեւոր իրողութիւն։ Այսպէս, Քսենոփոնիր Անարասիսում հաղորդում է, որ Սիրիայի միջով 50 փարսախ ընթանալով՝ խոռվարար բանակը հասնում է Արաքսէ գետին<sup>44</sup>, որը Եփրատի ձախակողմէնան վտակներից մէկն է, թէրեւս Խաբուրը։ Նախ, այս տեղեկութիւնների պարզում է, որ Ե. սատրապութիւնը՝ Աթորան, տարածուել է նաև Եփրատի ձախափեակում, որից հարաւ եւ հարաւ-արեւելք Արաքիան եր։ Ինչ զրի վերջում էլ, զօրավար-պատմիչը, թուարկելով անցած երկրների տիրակալներին, յիշատակում է երկու կարեւոր տեղեկութիւններ։ Փիւնիկիայի եւ Արաքիայի տիրակալն եր Դեռնեսը, Սիրիայի եւ Ասսիրիայի՝ Բելեսիսը<sup>45</sup>։ Սիրիան, Փիւնիկիան, Կիպրոսը Դարեհ Ա.ի օրօք կագմել են մէկ սատրապութիւն, եթի Կիրոսի ժամանակ՝ Ք.ա. 535ին, Սիջագետը եւ Անդրգետը, այսինքն՝ Եփրատից արեւմուտք ընկած Սիրիան, Փիւնիկիան, Պաղեստինը կազմել են մէկ նահանգ, որը մօտ 516ին բաժանում է երկու մասի՝ Միջազետք եւ Անդրգետք (Եփր-Նարի), իսկ արդին Դ. դարում Անդրգետքը եւ Կիլիկիան միաւրում են մէկ սատրապութեան մէջ<sup>46</sup>։ Ինչ վերաբերում է Քսենոփոնի վերջին տեղեկութեանը, կարելի է ենթադրել, որ Ք.ա. Ե. դարի վերջին Ե. սատրապութիւնը բաժանուել երկու հասուածների՝ Սիրիա, Ասսիրիա եւ Փիւնիկիա, Արաքիա, կամ ել, ինչը լիովին հնարաւոր է, Դեռնեսը եղել է փոխկառավարիչ<sup>47</sup>։

Սիրիան եւ Ասսիրիան՝ որպէս վարչական միաւոր, յիշատակում են նաև Արիանոսի մօտ, համաձայն որի, Գաւգամելայի ճակատամարտին Սազէյր առաջնորդում էր «Կոյլէ-Սիրիայի եւ երկու գետերի միջին ընկած Սիրիայի սիրիացիներին»<sup>48</sup>։ Այս տեղեկութիւնը նշանակում է, որ Ե. սատրապութեան թէրեւս ենթաշրջան հանդիսացող Կոյլէ-Սիրիա<sup>49</sup> - Սիրիան (ինա՞ Աթորա) Արեւմնեան տէրութեան անկման պահին դեռեւս մնում էր, ինչպէս Ք.ա. Ե. դարի վերջին, վարչական մէկ միաւոր՝ հիւպարքիա։ Արաբների մասին պահպանուած տեղեկութիւնները թոյլ են տալիս կատարել հետեւեալ եզրակացութիւնները։ Այսպէս, Հերոդոտոսը յայտնում է, որ Պասմենտիրոս բազաւորի օրօք կայազօրներ հաստատուեցին երովացիների դէմ Ելեփանտին՝ բաղարում, արաբների եւ ա-

սորեստանցիների դէմ՝ Դափնեում, որը Պելուսիայում է, և Լիբիայի դէմ՝ Մարիայում<sup>50</sup>: Սէկ այլ տեղեկութեան մէջ պատմիչը հաղորդում է, որ արաքների եւ ասորեստանցիների քազաւոր Սանարարիքը (իմա՝ Սենեքերիմ) արշաւում է Եգիպտոս<sup>51</sup>: Մէջքերուած երկու տեղեկութիւնները թոյլ են տալիս կատարել երկու հետեւութիւններ. արաքները Եգիպտոսի ծայր հիւսիս-արեւելքում, Պելուսիայի շրջանում սահմանակցել են Եգիպտոսին, կամ էլ ասորեստանցիների հետ արաքների համատեղ յիշատակուելը ցոյց է տալիս, որ խօսքը գեում է ասորեստանցիներից եւ արաքներից կազմուած պետական կազմաւորման մասին: Սակայն Հերոդոտոսի միւս տեղեկութիւնները հնարաւորութիւն են տալիս առաջնութիւնը տալ առաջին եզրակացութեանը, քանի որ պատմիչը միւս տեղեկութիւններից պարզուում է, որ արաքներն իրօք Պաղեստինեան Սիրիա կոչուած երկրի առափնեայ փորք հասուածում դուրս են եկել Միջերկրական ծով: Համաձայն Հերոդոտոսի՝ Կաղիւտիս քաղաքից մինչեւ Ենիսոս քաղաքը ընկած ծովափնեայ նաւահանգիստները պատկանում են արաքներին<sup>52</sup>: Ըստ որում, Փինիկիայից մինչեւ Կաղիւտիս քաղաքը պաղեստինեան սիրիացիների երկիրն է<sup>53</sup>: Կաղիւտիս քաղաքը համապատասխանում է Գազային, իսկ պաղեստինեան սիրիացիները՝ փողտացիներին: Եգիպտոսի եւ Սիրիայի սահմանը կազմել է Կասիոն լեռը, որը ձգուել է Սերբոնիս լճի մօտով<sup>54</sup>: Ենիսոսից մինչեւ Սերբոնիս լիճը Հերոդոտոսը կրկին համարում է սիրիական հողեր<sup>55</sup>: Կասիոն լեռը եւ Սերբոնիս լիճը Պելուսիայից արեւելք՝ որպէս Եգիպտոսի մասեր, յիշատակուում են նաև Սորարոնի մօտ<sup>56</sup>: Սորարոնը նոյնպէս որոշ դէպքերում Կասիոն լեռը կամ համարում է Փինիկիայի մաս, կամ էլ Փինիկիային անմիջականորէն սահմանակից<sup>57</sup>, ինչն, ըստ երեւոյթին, պայմանաւորուած է Սորարոնի կողմից աւելի վաղ շրջանից եկող առիքուների օգտագործմամբ: Սէկ այլ կապակցութեամբ էլ Սիրիայի առափնեայ հասուածը համարուել է արաքական երկիր, որը ընակեցրել են սիրիացիները<sup>58</sup>: Սա այն հասուածն է, որը գտնուել է Կաղիւտիսի եւ Ենիսոսի միջեւ:

Կաղիւտիսի կամ Գազայի մասին հետաքրքիր տեղեկութիւններ ունի նաև Արիանոսը, թէ՝ Գազան Փինիկիայից Եգիպտոս տանող ճանապարհի վերջին քաղաքն է, անապատի սկզբին, որի կառավարիչ Բատը, հաւաքելով վարձկան արաքների, ուժեղ դիմարդութիւն է ցոյց տալիս Ալեքսանդրին: Միեւնոյն ժամանակ Արիանոսը Գազան համարում է Պաղեստինեան Ասորիքի քաղաքներից մէկը<sup>59</sup>: Ռուփոսը նոյնպէս գրում է, որ Գազայում մակեդոնացիներին դիմարդում են պարսիկները եւ արաքները<sup>60</sup>: Խնչպէս երեւում է Արիանոսի ուղղակի եւ Ռուփոսի անուղղակի տեղեկութիւններից, Գազան հանդիսացել է Փինիկիայի սահմանային քաղաքը, որից յետոյ Եգիպտոսն էր: Պարզուում է, որ

վարչական առումով Պաղեստինեան Սիրիան մտել է Փինիկիայի մեջ, այն դեպքում, եթե դատելով Հերոդոտոսի սատրապութիւնների մասին տեղեկութիւններից՝ Պաղեստինեան Սիրիան նախապէս եղել է Ե. սատրապութեան ենթաշրջաններից մեկը: Ընդ որում, Փինիկիան եւ թերեւս Արաբիան, ինչպէս Քսենոփոնի օրօք, Ք.ա. Դ. դարի վերջերին եւս շարունակում էին մասն որպէս առանձին վարչական միաւոր: Ռուփոսի մի տեղեկութիւնից էլ յայտնի է դառնում, որ Տիրոս քաղաքի պաշարման ժամանակահատուածում Ալեքսանդրը զօրքի մի մասով արշաւում է Արաբիա, այն դեպքում, եթե Արիանոսի հաղորդումից պարզում է, որ Ալեքսանդրը արշաւածը է կազմակերպում այն Արաբիայի դեմ, որը գտնուում էր Անտիլիբանանեան կոչուող լեռն մօտ<sup>61</sup>: Անտիլիբանանեան կոչուող լեռները գտնուել են Սիրոնի մօտ, որոնք Լիբանանեան լեռների հետ ձգուել են մինչեւ Արաբական լեռները, որոնք բարձրանում են Դամասկոսեան լեռների վրայ<sup>62</sup>: Մեկ այլ տեղում էլ Ռուփոսը յիշաւուակում է այսպէս կոչուած Լիբանանեան լեռները, որտեղ վայրի արաբները յարձակուել են սպանել ին երեսուն մակեդոնացիներից<sup>63</sup>: Բերուած տեղեկութիւնների համադրումից պարզում է, որ Արաբիան կամ աւելի սուոյց նրա մի մասը, գտնուել է Դամասկոսի հարեւանութեամբ, ընդ որում, կարելի է եղանակացնել, որ Արեմէնեան Պարսկաստանի համար ստեղծուած ծանր կացութեան պայմաններում արաբները շարունակելով մեալ որպէս դաշնակիցներ կամ վարձկաններ, օգնում են պարսիկ-ներին, և միայն Ալեքսանդրի անմիջական ճնշման տակ նրանց այն հատուածը, որը գտնուում էր Դամասկոսից արեւելը, ենթարկում է մակեդոնացիներին: Դամասկոսը Արեմէնեան տէրութեան կարեւորագոյն քաղաքներից մեկն էր<sup>64</sup>, որտեղ գտնուել է նաև պետական գանձարաններից մեկը: Ռուփոսը Դամասկոսը յիշաւուակում է որպէս Ասորիքի քաղաքներից մեկը, սատրապական նստավայր<sup>65</sup>:

Ստացուում է, որ Արաբիան, մեր կարծիքով, տեղադրուում է Պալմիրայի շրջանում, և այս առումով Քսենոփոնի այն տեղեկութիւնը, թէ Կիրոս Կրտսերի բանակը Արաբսէ գետն (հաւանաբար Խարուքն է) անցելուց յետոյ ճանապարհը շարունակում է Արաբիայի միջով<sup>66</sup>, սխալ չէ և համապատասխանում է տուեալ ժամանակի իրողութեանը: Արաբսէ գետից անդին յիշաւակուած Արաբիան աշխարհագործն համապատասխանում է ուշ ժամանակաշրջանի հին հեղինակներից Ստրաբոնի սկենիտ կոչուած արաբների բնակութեան տարածքների մասին տեղեկութիւններին<sup>67</sup>, որոնց ներթափանցումը Եփրատի ձախափնեակ սկրսուել էր դեռևս Արեմէնեան դարաշրջանում: Ընդ որում, դատելով Քսենոփոնի որոշ տեղեկութիւններից, հենց Արաբիայով յոյների անցումն էլ պայմանաւորել է այն վկայութեան յիշաւակութիւնը, թէ Փինիկիան և Արաբիան եղել են մեկ վարչական միաւոր: Քսենոփոնը նշում է, որ Կի-

միկայի և Սիրիայի սահմանն այն դարպասն էր<sup>68</sup>, որն աւելի ուշ յայտնի է Ամանոսեան Դրուեր անունով: Այստեղից Կիրոսի բանակը հինգ փարսախ շարժում է մինչեւ փինիկեցիներով քնակեցուած Սիրիանդու ծովափնեայ քաղաքը, և փաստօրէն ճանապարհի մնացած ուղին մինչեւ Արաբսէ գետը Քսենոփոնը համարում է Սիրիա<sup>69</sup>: Փինիկեցիների յիշատակուում տուեալ հատուածում միանշանակ հիմք չի կարող լինել այն պնդման՝ թէ Փինիկայի սահմանը հիւսիում այդքան ընդարձակուել էր: Սա պարզապես նշանակում է, որ Սիրիանդուը փինիկեցիների կողմից հիմնադրուած քաղաք էր Փինիկիայի սահմաններից դուրս: Ասուածից ենթադրում ենք, որ Կիրոսի բանակը քնաւ չի անցել Փինիկայով, եւ ենց Արաբիայի տարածքով անցնելուց յետոյ միայն Քսենոփոնը յիշատակում է Փինիկիայի և Արաբիայի կառավարիչ Հեռնէսին՝ որպէս մեկ վարչական միաւորի տիրակալ:

Փաստօրէն հին պարսկական սեպազիր արձանագրութիւնների Արաբիա երկիրը համապատասխանում է Դամասկոսից արեւելք՝ մինչեւ Եփրատի ձախափնեակ ընկած տարածքին, որը պայմանաւորուած էր Արեւենեան արքաների՝ արաբների նկատմամբ տարուող յատուկ քաղաքանութեան: Արաբների հաստարմութիւնը պարսից արքաներին, ինչպէս տեսանք վերեւում, երեւաց նոյնիկ պետութեան կործանման ժամանակաշրջանում: Ընդ որում, այս Արաբիան՝ որպէս վարչական միաւոր, ուներ իր տնտեսական և ռազմական յստակ պարտաւորութիւնները պետութեան նկատմամբ, ինչպէս միւս սատրապութիւնները: Սակայն, ըստ Երեւեան, կար նաեւ մեկ այլ Արաբիա, որն արաբներ էթնանուան ներքոյ դաշնակցային յարաբերութիւնների մէջ էր Արեւենեան Պետութեան հետ: Այս արաբներին մենք կ'անուաննենք հարաւային՝ ի տարբերութիւն հիւսիսային:

Վերեւում ցոյց տուեցինք, որ արաբները Կաղիւտիսի և Ենիւսոսի միջեւ դուրս էին եկել Սիցերկրական Ծով, ընդ որում արաբների քաղաքական իշխանութիւնը այդ հատուածում պայմանաւորուած էր առեւտրական նկատառումներով, եւ թերեւս անմիջական առեւտրական հաղորդակցութիւնը մերձնովեան շրջանից նաբարեական Պետրայի միջոցով շարունակում էր Արաբական թերակղու խորքերը: Հենց Կամբիսէն է Եզիպտոսը նուածելու համար խնդրում եւ ստանում է այս շրջանների արաբների թագաւորի օգնութիւնը եւ անցնելով նրանց երկրով՝ նուածում Եզիպտոսը<sup>70</sup>: Այս օգնութեան շնորհի էլ արաբները, որոնք ըստ Երեւյիթին նաբարեացիք են<sup>71</sup>, համարուեցին պարսիկների դաշնակիցները և հաւաքարք պահպանեցին մինչ պարսիկների կողմից Եզիպտոսի նուածումն ունեցած առեւտրական տիրապետութիւնը Սիցերկրական Ծովի առափնեայ փոքր հատուածում, ինչը բխում էր նաև Արեւենեան Պետութեան շահերից: Եւ ենց այս արաբներին նկատի

ունի Հերոդոտոսը, երբ նշում է, որ Դարեհին, բացի արարներից, ենթարկում էին Ասխայի բոլոր ժողովուրդները, որոնց երկիրը ապահով էր<sup>72</sup>: Նկատի ունենալով, որ արեւելում Եգիպտոսի սահմանը հասել է մինչև Սերբոնիս Լիճը, կարելի է ընունելի համարել, որ արարների հշիանութիւնը տարածում էր նաև Սինայի Թերակղզու վրայ, ընդ որում Ենիսիսից մինչև Սերբոնիս Լիճը Հերոդոտոսը կրկին աշխարհագրական առումով համարում է սիրիական հողեր, որոնք տուեալ ժամանակում (Կամբիսէսի Եգիպտոսական արշաւանքի ժամանակ) նոյնպէս պէտք է զունուեին բոշուրք արարների վերահսկողութեան տակ: Բերուած տեղեկութիւնների ընուոթիւնից պարզում է, որ եթէ Հերոդոտոսի ժամանակ Փիլսիկիան հարաւում հասել է մինչև Սերբոնիս Լիճը և Կասին Լեռը, ապա Ալեքսանդրի արշաւանքի ժամանակ Ե. սատրապութեան հարաւային սահմանը հասնում էր մինչև Գազա, այսինքն՝ Եգիպտոսական սատրապութիւնը հիսիս-արեւելում ընդարձակուել էր ի հաշի հարեւան սատրապութեան տարածքների: Այս բացատրութիւնն է իր հերթին ցոյց է տալիս, որ Սինայի Թերակղզին կամ գոնէ նրա հիւսիսային մասը սկզբում միացուած է եղել Ե. սատրապութեանը, իսկ յետոյ թերեւս Դ. դարի երկրորդ կեսերից՝ Եգիպտոսական սատրապութեանը:

Ի մի բերելով վերը կատարուած ընուոթեան արդիւնքները՝ զայխ ենք այն Եգիպտակացութեան, որ Արեւելեան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգի հիմքում դրուած էր տարբեր ժողովուրդների միաւորումով մեկ ամբողջութիւն՝ միութիւն ստեղծելու զաղափարը, որը շուրջ Երկուհարիդ տարի պահպանուեց պասարզների ցեղից սերող Արեւելեան տոհմի զիշաւորութեամբ: Միւնչեն ժամանակ ցոյց տրուեց, որ Արեւելեան արքաների արձանագրութիւններում յիշատակուող երկրները չեն արտացոլում կայսրութեան վարչական բաժանման համակարգը եւ ներկայացնում են հպատակ երկրները, չնայած որ հենց այդ երկրները կազմում էին սատրապութիւնները և իրենց յիշատակութեամբ հիմնականում ներկայացնում են կայսրութեան զիշաւոր կամ հիմնական ժողովուրդներին: Պարզուեց, որ վարչական առումով Արեւելեան Պարսկաստանը բաժանուած էր 21 սատրապութիւնների, ընդ որում, ԻԱ.<sup>1</sup> Սկզբուա սատրապութիւնը ձեւադրուել էր Դարեհի կողմից համապետական վարչական վերափոխումներ ձեռնարկելուց քիչ աւելի ուշ, ըստ այդմ էլ տեղ չի գուել Հերոդոտոսի ցուցակում:

## ՍԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> "Satrap", *Pauly's Real-Encyclopädie der Classischen Altertumswissenschaft*, München, 1921, էջ 82-188:

<sup>2</sup> Հերոդոտոս, Պատմութիւններ Գրքից Պրզմ. Ա. Կրեաշարեան, Երևան, ՀԱՍՀ ԳԱ Հրատ., 1986, III, 89-97. Խառը՝ *Herodotus* (With an English translation by A. D.

- Godley), V. II, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, 1957, № 116-127;
- <sup>3</sup> J. Junge, *Saka-Studien, Der ferne Nordosten im Weltbild der Antike*, Leipzig, 1939, № 44, 90;
- <sup>4</sup> B. A. Turayev, *Istoriya Drevnego Vostoka* (Հին Արևելյան պատմութիւն), T. II, Լենինգրած, 1935, № 138. Խաչ՝ V. V. Masson, *Drevnezemledevcheskaya Kultura Margyani, Materyali I Isledovaniya Po Arkheologii SSSR* (Սարբերի հնադարեայ աշխարհազբաղստական մշակոյթը, հնագիտութեան կիրեր և ուսումնաժողովները), Vip. 73, Մոսկով-Լենինգրած, 1959, № 148. Խաչ՝ I. M. Diakonov, *Ocherki Istorii Drevnego Irana* (Ավելիներ հնադարեայ Իրանի պատմութեան), Մոսկով, 1961, № 92;
- <sup>5</sup> A. T. Olmstead, *History of the Persian Empire*, Chicago, 1948, № 291. Խաչ՝ Masson, № 149. Խաչ՝ *Istoriya Tadzhikskogo Naroda* (Տաջիկական ժողովրդի պատմութիւն), T. I, Մոսկով, 1963, № 206;
- <sup>6</sup> I. M. Diakonov, *Istoriya Midii* (Մարաստանի պատմութիւն), Մոսկով-Լենինգրած, 1956, № 340 և յիս. Խաչ՝ *Istoriya Tadzhikskogo*, № 158;
- <sup>7</sup> F. Altheim, *Weltgeschichte Asiens Im Griechischen Zeitalter*, T. I, Հայլ, 1947, № 142;
- <sup>8</sup> Diakonov, *Istoriya Midii*, № 342 ևս.:
- <sup>9</sup> E. Herzfeld, *The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East*, Վիսավան, 1968, № 288, 292, 296;
- <sup>10</sup> Մեղինսու-տարրութեան շահ սորուս մարմիների համար, որն օգտագործում էին ինք Յունաստանում: Աստիկեան մեղինսու հաւասար էր մօտառքապէս 52,5 լիտրի:
- <sup>11</sup> Հերոդոտոս, III, 89-97:
- <sup>12</sup> «Դարեհ Վշտասպի Բիսեթունեան Արձանազրութիւնը» (թրգմ. Քնազրից, առաջարան և ծնոթ. Գ. Նալբանդյանի), Երևան, 1964, № 8. Խաչ՝ R. Kent, *Old Persian Grammar. Texts. Lexicon*, 2<sup>nd</sup> ed., New Haven, 1953, № 119. Խաչ՝ *Les Inscriptions de la Perse Achéménide. Traduit du Vieux Persé, de l'Élamite, du Babylonien et de l'Araméen, présenté et annoté par Pierre Lecoq*, Paris, Gallimard, 1997, № 188;
- <sup>13</sup> Հերոդոտոս, III, 97:
- <sup>14</sup> Բարկէն Յարութիւնեան, «Արեմենեան Պարսկաստանի XVIII Սատրապութեան Տեղադրութեան Շուրջ», Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 1999, թի 1-12, № 96-97. Խաչ՝ Յովհաննես Խորիկեան, «Արեմենեան Պարսկաստանի XI և XV Սատրապութիւների Տեղադրութեան Շուրջ», Լրաբեր Հասարակական Գիտութիւնների, 2006, թի 1, № 147-157:
- <sup>15</sup> Kent, № 127:
- <sup>16</sup> Նոյն, № 123:
- <sup>17</sup> Նոյն, № 127:
- <sup>18</sup> Նոյն, № 123, 127:
- <sup>19</sup> Հերոդոտոս, III, 96:
- <sup>20</sup> M. A. Dandamayev, *Politicheskaya Istoriya Akhemenedidskoy Derjavii* (Արեմենեան Պետութեան քաղաքական պատմութիւն), Մոսկով, 1985, № 108-109. Խաչ՝ Հերցֆելդը Հնդկաստանի Խուածումը քուազրում է Ք. ա. 519-518ին (E. Herzfeld, "A New Inscription of Darius from Hamadan", *Archaeological Survey of India*.

*Memoires*, N 34, Calcutta, 1928, էջ 2), իսկ Օլմսթեդը՝ Ք.ա. 513ին (Olmstead, էջ 145): Ստրուվին՝ Ք.ա. 514ին, 516-515ին արշաւակին և անհապատճառութիւնն էր (V. V. Struve, *Etudi Po Istorii Severnogo Prichernomoriya, Kavkaza I Sredney Azii* (Ուսումնային թիւններ Հիմայային Մերձականական, Կովկասի և Միջին Ասիայի պատմութեան), Ենիսեյկան, 1968, էջ 102):

<sup>21</sup> Dandamayev, էջ 282:

<sup>22</sup> Dandamayev, *Iran Pri Pervikh Akhemenidakh* (VI v. do. N. E.) (Իրանը Արևմետական վաղ շրջակին, Ք.ա. Զ. դար), Սովորուա, 1963, էջ 80:

<sup>23</sup> Kent, էջ 136:

<sup>24</sup> Նոյն, էջ 137:

<sup>25</sup> Kent, էջ 136:

<sup>26</sup> Այս արշաւակը դնում էր Ք.ա. 516ի և 512ի միջեւ (Dandamayev, *Politicheskaya*, էջ 109, 111):

<sup>27</sup> Dandamayev, *Politicheskaya*, էջ 111 (Շեմերենիին ենթադրում է, որ *Skudra* նշանակում է այն սկիթական ցեղերը, որոնք ապրում էին Սակեղնիայում կամ Թրակիայում (O. Szemerényi, *Four Iranian Ethnic Names: Scythian-Skudra-Sogdian-Saka*, Wien, 1980):

<sup>28</sup> M. A. Dandamayev, V. G. Lukonin, *Kultura I Ekonomika Drevnego Irana* (Հին Իրանի մշակույթը և տնտեսութիւնը), Սովորուա, 1980, էջ 111:

<sup>29</sup> Հերոդոտոս, VII, 100:

<sup>30</sup> Նոյն, VII, 61-96. Խաեւ՝ *Herodotus*, V. III, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, 1957, էջ 374-399:

<sup>31</sup> Herzfeld, *The Persian Empire*, էջ 310:

<sup>32</sup> Հերոդոտոս, VII, 73:

<sup>33</sup> Բարկեն Յարութիւնեան, Հայաստանի, Հայ-Իրանական Յարաբերութիւնների Եւ Առաջար Ասիայի Հնագոյն Պատմութեան Մի Քանի Խնդիրների Ծուրց (մ. Ք.ա. VII-VI դ.դ.), Երևան, 1998: Հմտած՝ Յ. Խորիկեան, «Սատրապական Հայաստանի Արեւմտեան Եւ Հարաւայի Սահմանները մ.ք.ա. VI-IV Դարերում», *Պատմաբանափրական Հանդես*, 2005, թիւ 3, էջ 181:

<sup>34</sup> Kent, էջ 151:

<sup>35</sup> Նոյն, էջ 165, 178:

<sup>36</sup> Lecoq, էջ 138: Հերցֆելդը զրում է. "the Akōfaçiya lived in southern Lāristān and Kirmān on the Indian Ocean". իսկ մեկ այլ տեղում էլ զրել էր, որ "the Qufs, Kōç, inhabitants of the Bashākird mountains between Hormuz and the Kōh i Bārič, appear in Xerx. Pers. daiv. as OP. akōfaçiya > kōfiç (qufs) > kōhiç > kōç, from OP. kōfa «mountain», \*kōfaka «mountaineer»" (Herzfeld, էջ 300-301, 365): Օլմսթեդը Akaufakaն (the Mountain Land) տեղադրում է ենթային Աֆղանստանում՝ Քարույից հիւսիս (Olmstead, էջ 231):

<sup>37</sup> Յարութիւնեան, «Արեւմտեան Պարսկաստանի», էջ 45-114:

<sup>38</sup> Հերոդոտոս, III, 97:

<sup>39</sup> Pauly's Real-Encyclopädie der Classischen Altertumswissenschaft, Stuttgart, 1958, s. v. Daai, S. 1945-1946:

<sup>40</sup> Հերոդոտոս, I, 125:

- <sup>41</sup> Kent, էջ 155-156: 5-րդ տեղերում պէտք է յիշատակուն արեյը, բակորիացին, սոզիացին (նոյն, էջ 156). Խաչ՝ Lecoq, էջ 271:
- <sup>42</sup>Տէ՛ս, օրինակ, Վ. Բայրութիան, *Իրակի Պատմութիւն (Հնագոյն ժամանակներից Մինչեւ ՍԵՐՈ ՕՐԵՐԸ)*, Երևան, 2005, էջ 57-58:
- <sup>43</sup> Հերոդոտոս, III, 97:
- <sup>44</sup> Քունիփոն, *Անարասիս* (թրգմ. Ա. Կրկեաշարեան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1970, էջ 20:
- <sup>45</sup> Նոյն, էջ 197:
- <sup>46</sup> Dandamayev, V. G. Lukonin, էջ 111-112:
- <sup>47</sup> Herzfeld, էջ 306:
- <sup>48</sup> Arrian, *Anabasis Alexandri* (With an English translation by E. Iliff Robson), V. I-II, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, 1958-1961, III, 8; 11, էջ 246, 257. Խաչ՝ Arrian, *Pokhod Aleksandra* (Perevod S Drevnegrecheskogo M. E. Sergeyenko) (Աղեքսանդրի արշաւանքը, թարգ. Մ.Ե. Սերգեյենկո, հին յունարէսից), Սովորա-Լենինկրատ, 1962, III, 8; 11. Խաչ՝ Արիանոս, «Աղեքսանդրի Արշաւանքը», *Աղեքսանդր Մակեդոնացի*, Երևան, 1987, էջ 97, 101:
- <sup>49</sup> Ըստ Ստրաբոնի՝ Կելեսիրիան լայն առումով տարածում էր մինչեւ Եզիպոսս և Արարիս, իսկ նեղ առումով՝ Լիքանանեան և Անտիլիքանեան լեռների միջեւ (Strabon, *Geografiya V 17 Knigakh* (Աշխարհագրութիւն 17 գրքով), Perevod, Statya I Komentari G. A. Stratanovskogo, 1964, էջ 699-700):
- <sup>50</sup> Հերոդոտոս, II, 30:
- <sup>51</sup> Նոյն, II, 141:
- <sup>52</sup> Նոյն, III, 5. Խաչ՝ Herodotus, III, 5, էջ 8-9: Հերոդոտոսի երկի ուստիրեն հրատարակութեան մէջ թարգմանուած է «արաբների թագաւորութեանը», ինչը խօսում է արաբների ոչ թէ էթնիկական ներքափակումն, այլ ինչ-որ ցեղային իշխանութեան քաղաքական սահմանների մասին (Gerodot, *Istoriya V Devyati Knigakh* (Պատմութիւն 9 գրքով), Perevod I primechaniya G. Stratanovskogo, Լենինկրատ, 1972, էջ 139):
- <sup>53</sup> Հերոդոտոս, III, 5:
- <sup>54</sup> Նոյն, II, 6; III, 5:
- <sup>55</sup> Նոյն:
- <sup>56</sup> Strabon, էջ 58, 65, 702: Առանձին դէսպերում Ստրաբոնը Սերբոնիս Լիճը շփորում է Մեռեալ Ծովի հետ (նոյն, էջ 703-704, 707):
- <sup>57</sup> Նոյն, էջ 65, 703:
- <sup>58</sup> Հերոդոտոս, II, 12:
- <sup>59</sup> Արիանոս, էջ 86-87:
- <sup>60</sup> Ռուփոս, «Աղեքսանդր Մակեդոնացու Պատմութիւնը», *Աղեքսանդր Մակեդոնացի*, Երևան, 1987, էջ 333: Տէ՛ս Խաչ՝ Kvint Curtiss Ruf, *Istoriya Aleksandra Makedonskogo* (Աղեքսանդր Մակեդոնացու պատմութիւնը), Սովորա, 1963, էջ 93. Խաչ՝ Rufus Curtius Quintius, *History of Alexander* (With an English transl. by John C. Rolfe), V. I-II, Loeb Classical Library, Cambridge-Massachusetts-London, 1956, էջ IV, VI, 21:
- <sup>61</sup> Ռուփոս, էջ 319-320. Խաչ՝ Արիանոս, էջ 79:

<sup>62</sup> Strabon, էջ 699.

<sup>63</sup> Ուսւփու, էջ 319: Այս հատուածում խօսք գտում է թափառական արաբների մի խմբի մասին, որը հասել էր մինչեւ Լիբանանեան լեռների շրջանը, չնայած համաձայն Պլուտարքոսի՝ արաբները բնակում էին Աստիլիբանանեան լեռներում, ինչև աւելի ճիշտ է (Plutarkh, Aleksandr, XXIV.-Izbrannye Jizneopisanija (Աղեքսանդր ԲԴ.-ընտիր կենսագրութիւն), T. II, Սոսկուա, 1987):

<sup>64</sup> Տե՛ս օրինակ՝ Արիանու, էջ 68, 73:

<sup>65</sup> Ուսւփու, էջ 295, 310:

<sup>66</sup> Քունիփոն, էջ 20:

<sup>67</sup> Strabon, էջ 686, 693-694, 708:

<sup>68</sup> Քունիփոն, էջ 17:

<sup>69</sup> Նոյն, էջ 18-20:

<sup>70</sup> Հերոդոտոս, III, 5-9:

<sup>71</sup> Նարաքեացիների մասին մանրամասն տե՛ս՝ Strabon, էջ 703, 718, 720, 740:

<sup>72</sup> Հերոդոտոս, III, 88, 91:

## HERODOTUS' LIST OF THE SATRAPIES (A HISTORICO-GEOGRAPHIC STUDY) (SUMMARY)

HOVHANNES KHORIKIAN  
hovhkhor78@mail.ru

The author highlights the importance of Herodotus' list of the Satrapies for the study of the administrative divisions of the Achemenian state. The author notes that there are diverse, controversial claims about the sources of this list.

The comparison of Herodotus' list with information of antique and ancient Persian cuneiform inscriptions discloses historico-geographical facts, which have significant importance for the study of the history of the Achemenian state and of those people who were incorporated into it.

The multifaceted examination of the sources shows that during the two centuries of the Achemenide state the Satrapies underwent administrative re-formations, which aimed at consolidating the power of the Persian administration and securing the regular payment of taxes.